Մրցույթ՝ «ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Ամրակից գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի դաստիարակի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

Մրցույթին կարող են մասնակցել այն անձինք,ովքեր ունեն ՝ միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ (հիմք՝ Հայաստանի Հանրապետության Կրթության, Գիտության, Մշակույթի և Սպորտի նախարարի 27 մարտի 2024 թ. N 20-Ն հրաման):

Մրցույթին մասնակցելու համար անձը տնօրենին է ներկայացնում՝

1) դիմում (Ձև 1).
2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).
3) անձը հաստատող փաստաթուղթ.
4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).
5) ինքնակենսագրություն (Ձև 4).
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի.

Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացիները փաստաթղթերը ներկայացնում են անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:
Ներկայացվող փաստաթղթերի հետ միասին անհրաժեշտ է ներկայացնել նաև դրանց բնօրինակները, ներկայացրած փաստաթղթերի պատճենները ետ չեն վերադարձվում:
Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր՝ օգոստոսի 2-ից մինչև օգոստոսի 29-ը ներառյալ, ժամը 09:00-16:30-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել «ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Ամրակից գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ / գ. Ամրակից 1 փողոց, 11 շենք :
Մրցույթը կկայանա 2024 թ.-ի օգոստոսի 30-ին ժամը 14:00-ին, «ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Ամրակից գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում :

Հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ խոշորացված համայնք, գ. Ամրակից, 1փողոց, 11 շենք: